

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Անցեալ քրոնիկում, Կ. Պոլսի պատրիարքական ընտրութիւնների առիթով ասուեց հետեւեալը. «Հրաժարական տւած Խորէն արքեպ. Աշըղեանի տեղ պէտք է ընտրուի նոր պատրիարք, ինչ կարող ենք խորհուրդ տալ այսքան հեռուից: Մի բան միայն գիտենք, որ նոր պատրիարքը իսկապէս դեր ունի կատարելու թող չը ստանձնի պատրիարքական պաշտօնը նա, ով գործի ալժմեալ բարձրութեան վերաջ կանգնած չէ: Նա, ով մի է ճանաչւած իւր ժողովրդի հետ, նորան է կանչում ժամանակը: «Բոլիգիգալի» ամենեին ժամանակ չէ»:

Ալժմ գոհունակութեամբ կարող ենք վկայել, որ Պոլսից դուրս հրատարակող հալ օրգանները նմանապէս եկել են այն եզրակացութեան, որ ալժմեալ ընտրելին պէտք է լինի սնա, ով մի է ճանաչւած իւր ժողովրդի հետ և որ սնորան է կանչում ժամանակը»: Բայց ով է Կ. Պոլսի նշանակութիւն ունեցող շրջանների թեկնածուն, արդեօք Մկրտիչ արքեպիսկ. Խրիմեանը, որին կանչում է ժամանակը, թէ մի ուրիշը: Պոլսից հաստատուելու չունիմ ալդ մասին, բայց մի քանի վատ նշաններ ալնու ամենայնիւ նշմարելի են, որովհետև ցույցեր եղան, որոնցից դժւար չէ եզրակացնել, թէ Խորէն Նար-բէլ թերևս պաշտպանւած թեկնածուն է Պոլսի մի ոչ աննշան կուսակցութեան համար:

Ներկալ նուժքեր ամսին կատարելու են ընտրութիւններ Թիֆլիսի քաղաքալին խորհուրդի և լաջորդ քառամակի համար: Նոր ընտրւած խորհուրդը պէտք է ընտրէ և նոր վարչական անդամներ՝ քաղաքաղուի, նորա օդնական և երկու ալ անդամներ: Բայտնի է, որ ընտրութեան մասնակցում են քաղաքին հարկ վճարողները: Արդ, դոքա բաժանում են երեք կարգի, կամ նորադոն հակարանութեամբ՝ Երեք կուպարի. ամենաշատ տնա՛արի տուղները կազմում են առաջին կուպար, միջակները՝ երկրորդ կուպար, ամենա-

քիչ հարկ վճարողները երբորդ կուպար, նրեք կուպարներից իւրաքանչիւրը ընտրում է հաւասար թւով խորհրդականներ, կամ՝ ձալնաւորներ, և որովհետև առաջին կուպարին պատկանողները քչերն են, երկրորդ կուպարին պատկանողներին թիւն էլ աւելի քիչ է քան երրորդ կուպարին պատկանողները, ուստի խորհուրդի ձալնաւորներին մի երրորդը ընարւում է միայն մի քանի ասանակ անձերից, մի երրորդը մի քանի հարիւր մարդկանցից, մի երրորդն էլ՝ հազարից անց անձերից:

Մի բնական հետաքրքրութիւն ինձ մղեց իմանալու, թէ այդ ուղքեր են թիֆլիսի պէս մի քաղաքում առաջի կուպարին պատկանող անձերը, ալլապէս ասած՝ ուղքեր են թիֆլիսի անաաէր տուղերը: Եւ կարծում եմ, ընթերցողներիցս շատ շատերը նոյն հարցով կը հետաքրքրեն, որովհետև նիւթը կարող է տեղիք տալ շատ հետաքրքրական և դուցէ՛ օգտակար եղրակադութիւնների: Եւ այս ցուցակը կազմել եմ քաղաքային վարչութիւնից պատրաստած պաշտօնական ցուցակի հիման վերայ, միայն թէ մի փոքր նեղութիւն եմ կրել՝ որ անունները շարած լինեն ոչ թէ այբբէնական կարգով, այլ նալած նոցանից իւրաքանչիւրի վճարած քաղաքային հարկի խոշորութեան: Այս ցուցակի մէջ մտնում են թէ հիմնարկութիւններ և թէ մանաւանդ մասնաւոր անձեր: Հիմնարկութիւնների մէջ են տներ և կալւածքներ ունեցող եկեղեցիներ, ուսումնարաններ, բանկային հաստատութիւններ, մի խօքրով՝ կալւածատէրեր:

Ահա այդ ցուցակը:

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Տ Ն Ա Տ Է Ր Ե Ր

Առաջին կուպարի

Հարկի չափսը <sup>1)</sup>  
րուբլի, կոպ.

1	Թիֆլիսի Աղնակ. հող. բանկ . . . . .	3.163
2	Չիթախեան Գովհաննէս . . . . .	2.930
3	Բադրատիօն-Մուխրանսկի, իշխ. իւան. . . . .	2.492
4	Ալեքիան Գովսէպի ժառանգ. . . . .	2.179
5	Մանթաշևան Ալեքսանդր. . . . .	2.064
6	Թիֆլիսի քաղաք. վարկի ընկերութիւն. . . . .	1.754
7	Սարաջև Դաւիթ . . . . .	1.646
8	Մովսիսեան իսահակ. . . . .	1.300
9	Թամամշևան իւան. . . . .	1.275
10	Մարիամեան-Յոսեանեան աղջ. ուսումն. . . . .	1.115
11	Լոռու-Մելիքեան կոմս Միքայէլի ժառ. . . . .	957
12	Ձուրալով Նիկողայ. . . . .	916

<sup>1)</sup> Կոպէկները չեմ նշանակում:

13	Թամամշեան Վասիլի . . . . .	893
14	Վեցել Ֆրիդրիխ . . . . .	866
15	Թամամշեան Գէորգ . . . . .	846
16	Հաոց Ներսիս. Հոգ. Ազգ. Դպր. . . . .	836
17	Քարթւելով Գէորգի . . . . .	812
18	Վրաց իշխանուհի Նկատ. Իրակլի . . . . .	773
19	Վրաց իշխանուհի Նդիսաբ. Իրակլի, . . . . .	773
20	Ջեցեր Ֆրիդրիխ . . . . .	730
21	Էմբենեան Յովհաննէս. . . . .	724
22	Լալաբեան Կարապետ-բէկ. . . . .	707
23	Իուչկիեւ Ալեքսանդր. . . . .	703
24	Թամամշեան Գրիգոր. . . . .	799
25	Մարքարեան Յովհաննէս . . . . .	697
26	Խարաղեան Արտեմի ժառ. . . . .	692
27	Խոսրովեան Կատարինէ . . . . .	681
28	Դոբրժանսկի Նիկոլայ . . . . .	669
29	Աղաբաբեան Յովակիմ . . . . .	650
30	Փրիդոնեան Ալեքս. . . . .	618
31	Ջուբալով Ալեքսանդր . . . . .	573
32	Մարտիրոսեան Ռոստոմ. . . . .	535
33	Խալաթեան Խահակ . . . . .	521
34	Խալաթեան Սարգիս . . . . .	521
35	Անանեան Յովսէփի ժառ. . . . .	519
36	Բարանասեան Ալեքսանդր . . . . .	511
37	Էրիստովա, իշխանուհի Կատարինէ . . . . .	498
38	Թալիրեան Յովհաննէս . . . . .	498
39	Ռոսիեան Նագոր. . . . .	471
40	Ղարիբեան Գալուստ. . . . .	468
41	Տէր-Նիկողոսեան Դաւիթ . . . . .	463
42	Ջանջուղաղեան Ալեքսէյի ժառ. . . . .	456
43	Անտոնեան Սոլոմոն . . . . .	434
44	Ջուբալով Լևոն . . . . .	410
45	Քիւչարեանց Գրիգոր բժիշկ. . . . .	390
46	Ալաղեան Ալեքսանդր . . . . .	377
47	Ղորղանեան Գրիգոր. . . . .	376
48	Մելիքեան Ստեփան . . . . .	376
49	Խոջամինասեան Սոֆիա. . . . .	375
50	Ալաղեան Արտեմ. . . . .	368
51	Միրմանեան Դաւիթի ժառ. . . . .	365

	<i>րուբլի կոպ.</i>
52 Սաամկրովա Իւլիա . . . . .	364
53 Ռէդտեր Վարւարա . . . . .	360
54 Ղորղանեան Աննա . . . . .	357
55 Բաղեանդուրեան Գրիգոր . . . . .	351
56 Յեջուրեան Յեջուր . . . . .	344
57 Բակուրեան Նազոր . . . . .	344
58 Ամիրեան Գրիգոր . . . . .	342
59 Իֆենդեան Նունէ . . . . .	337
60 Փիթոլեան Խահակ . . . . .	331
61 Արամաբլխսեան Ալէքսանդր . . . . .	329
62 Կովկ. Ընկեր. դեղերի՝ ապր. առևտրի . . . . .	319
63 Փիթոլեան Խաչ . . . . .	318
64 Յունաց հկեղեցիին . . . . .	318
65 Ռոսինեան Մարկիանոս բժիշկ . . . . .	316
66 Կորիւինսկայա Աննա . . . . .	313
67 Միրզոլեան Իւան. Զոհրաբ . . . . .	308
68 Մադիր Ադրֆի ժառանգ . . . . .	305
69 Թամամչեան Վարւարա . . . . .	302
70 Թաթոսեան Յովհաննէս . . . . .	302
71 Մղիւանի Ասլան . . . . .	301
72 Տէր-Առատուրեան Գէորգ . . . . .	300
73 Ակցըրից Բողոտլաւ . . . . .	297
74 Մէլէր Իօնան . . . . .	297

Կումարն է . . . . . 52.201 ր. 16 կ.

Որպէս անճում է ընթերցողը, քաղաքումս անատէր տուղերի երկու երրորդը հափեր են, Վերը առաջ բերած թւերից ճիշտեղրակացութիւններ դուրս բերելը հեշտացնելու համար, պէտք է իմանալ թէ տունը ինչպէս է գնահատուում և հարկի ենթարկուում: Ահա օրինակ: Մի տուն բերում է տարեկան եկամուտ 1000 րուբլի: Իմանալու համար ի՞նչ ինչ արժէ արդ տունը, գումարում են նորա տասը տարւալ եկամուտը և ստանում են ուրեմն 10.000 րուբլի: Այս գումարի 25% -ը (2.000 ր.) հարկի չեն ենթարկում, ուրեմն կը մնայ 8.000 րուբլի, որից ամեն մի 1000 րուբլու համար վերցնում են տնահարկ մօտ 8 րուբլի:

Ի հարկէ, չը պէտք է կարծել, որ թիֆլիսի բոլոր կապիտալիստները արդ ցուցակում վրենեն, որովհետև կան կապիտալիստներ, որոնք մեծ կալւածատէրեր չեն. բաց թիֆլիս ճանաչողը չի կարող չը վկայել, որ արդ ցուցակում վրչաած անունների մէջ են թիֆլիսի ոչ միայն կալւածատէրերը, այլ և առհասարակ զրամատէրերը: Դա բնաորոշ է, որովհետև ցոյց է

տալիս Թիֆլիսի զրամատէրերի հակումը՝ Թիֆլիսի մէջ տներ տունել, կամ տներ շինել, մի խօսքով Թիֆլիսում իսկ կալածատէր դառնալ:

Առ այժմ աւելի հեռուն չեմ գնում աչս խուզարկութեան գործում. Բաւականանում եմ միայն թռուցիկ ակնարկներով, հենց օրինակ այն պատճառով, որ ամեն մէկի վճարած հարկը չի վերաբերում միայն կալածքին, քանի որ քաղաքային հարկ վճարում են ոչ միայն տնատէրերը, այլ և առհասարակ բոլոր առևտրական գործերի տէր մարդիկ:

Թիֆլիսը զրականապէս անուն է ստեղծում, որպէս երաժշտասէր և գեղարւեստասէր քաղաք: Դիտմամբ չեմ ասում՝ երաժշտական և գեղարւեստական քաղաք, որովհետև դա կեղծ կը լինէր: Բայց որպէս սիրող թատրոնի և երաժշտութեան և ոչ անպատճառ վատի, այլ մանաւանդ լաւի՝ նա կարող է իւր բանգը պահանջել թատրոնասէր և երաժշտասէր քաղաքների շարքում: Գուցէ որովհետև դորա վերաջ աւելանում է Կովկասի անունի հետ կապած մի ինչ որ կախարդական հրապուրանք, բայց սա իրողութիւն է, որ ևւրոպական հռչակները անլաւաղ չեն տեսնում մեզ ևս այցելել: Սոֆի Մենտեր, Պոպպեր, Ռալդենաուէր, Պախման, Ասիպովա, Ռոսսի և դեռ ուրիշներ, որոնց ես չեմ վիշատակում, մէկը միւսի լետևից այցելեցին մեր երկիրը և ամենքն էլ դուրս գնացին գոհ, շատ գոհ Թիֆլիսիցոց և Բաքուցոց առատածեռնութիւնից: Ի հարկէ չը պէտք է չափազանցնել և կարծել թէ բոլոր հռչակները հենց շտապում են մեզ մօտ գալ: Դա կը լինէր սխալ և շատ սխալ: Ընդհակառակը, դեռ շատ և շատ շատերը դեռ երկար կը մտածեն, մինչև որ ուղեցոյց կը կազմեն մեր երկիրը գալու համար: Բայց և այնպէս մի փոքրիկ հոսանք այնու ամենայնիւ ստեղծել է և հենց այդ հոսանքն է, որ մեզ մօտ է բերել և այն փոքրիկ Ռաուլ Կոչալսկուն, որը աչս հոկտեմբեր ամսին այնքան զարճութիւններ պատճառեց քաղաքիս մեծ ու պատիկին: Աս նորան լսեցի միայն մի անգամ, հոկտեմբերի 31-ին, ուր նա, այդ փոքրիկ վեց տարեկան պիանիստը նազեց Վեբերից, Շոպենից, Ֆոսսից, Կունցից ալ և այլ կտորներ, որպէս նաև իւր սեպական շարադրած մալուրկաններ: Ինական է այն հետաքրքրութիւնը, որով մարդ առաջին անգամ սկսում է լսել մի ալիքան փոքրիկ երևիսպին, մի մեծ դահլիճում, ներկայութեամբ հարիւրաւոր անձերի: Դուրս է գալիս երեխան, ուղեկցութեամբ իւր հօր, և նստում կոնցերտական մեծ դահլիճում առաջ, աթոռի վերայ, ունենալով հօրը իւր կողքին նստած, որը իւր որդուն ոչ—մի ուրիշ օգնութիւն չի անում, բացի այն, որ պեղայն է շարժում և նստաները տեղը դնելու և վերցնելու հողան է քաշում:—Մեր փոքրիկ Ռաուլը սկսեց ածել Վեբերից մի բաւականին երկար և դժւար կոնցերտական կտոր. մեծ չաջողութեամբ և համեմատաբար մեծ ուժով, որից լետու կարծեցի թէ պէտք է մի փոքր հանգստանալ: Բայց մեծ էր

ամենքի զարմանքը, երբ տեսանք, որ, ժողովրդի ծափահարութիւններին շնորհակալութիւններ չապրնելու համար տեղից վերկենալուց և գլուխ տալուց չետ, նա կրկին նստեց իւր տեղը և շարունակ խաղաց մինչ կոնցերտի առաջին բաժանմունքի բոլոր կտորները վերջացնելը: Վերերի կոնցերտ-շարիկից չետոյ նա խաղաց Գոլնօ-ից, բայց առանց տպաւորութիւն թողնելու: Ներշնչանքը կրկին եկաւ երբ երկրորդ բաժանմունքում սկսեց ածել Շոպենից, որին չէր կարելի չը լսել առանց զմալլելու:

Ժամանակամիջոցի ժամանակ և կոնցերտից չետոյ բնականաբար բազմաթիւ երեխաներ և հասակաւորներ հետաքրքրուեցին առանձին տեսնել փոքրիկ պիանիստին: Հետաքրքրութիւնը ինձ ևս մղեց դէպի առանձնասենեակը, ուր ես տեսալ փոքրիկ Ռաուլին զբաղւած իւր տանկական երկու Ֆեսկաներով, որոնց հետ նա խաղում էր: Սեղանի վերայ դրած էին նաև երկու մատիտ:

— Այս Ֆեսկաները երկի պարգևներ են:

— Ոչ, պատասխանեց նորա հայրը, ալդ ինքն է գնել, բայց ալս մատիտները ես եմ նորա համար գնել: Նա նոցանով իւր շարադրութիւններն է գրում:

— Մտադիր էք երկար մնալ ալստեղ:

— Ոչ, մի կոնցերտ էլ կը տանք չտոկասպէս երեխաների համար և ապա կ'ուզեմ որևէնք Ամերիկա կոնցերտներ տալու, իմպրեսարիօ'ի հրաւէրքով: Ռաուլին հրաւիրել են մի ամիս Ամերիկա կոնցերտներ տալու 150.000 Ֆրանկ վարձատրութեամբ:

— Եւ չէք վախենում, որ կարող է նա չողնել:

— Ոչ. Ռաուլի շըջապտոտները կը վերջնան դեկտեմբերին և ալնուհետև նա կ'երթալ Պարիզ, ուր Սեն-Սանսը նրան դասեր կը տալ:

— Կարծեմ Սեն-Սանսը մասնաւոր դասեր չի տալիս:

— Իողորովին ճիշտ է, Սեն-Սանսը ոչոքին չանձն չի առնում մասնաւոր դասեր տալ, բայց, որպէս մեծ բացառութիւն, Ռաուլին խոստացել է դասեր տալու առանց վարձատրութեան:

Ռաուլի հայր պր. Կոչալսկի որը նմանապէս լաւ պիանիստ է, բայց ոչ որպէս մասնագէտ, հաւատացնում էր ինձ, որ իւր որդին ընդունակ է ալսօրալ կոնցերտի ծրագրի քսանպատիկը խաղալ առանց հոգնելու:

— Բայց հետաքրքրական է իմանալ, թէ որքան հասկանում է նա իւր խաղացածը:

— Ռաուլը խաղում է հասկանալով: Եւ նա ինքն է ընտրում խաղալու կտորները: Այսօր հենց որ մատները դրեց կլաւիշների վերայ, նա խկոչն ասաց՝ հալիկ, զանամուրը խանդարւած է: Գորանից է անշուշտ, որ տեղ տեղ Ձեղ դուր չի եկել: Եւ գիտէք, հենց որ տեսաւ թէ զանամուրը խանգարւած է, Ռաուլը դիմեց հանդիսականներին մէկին, որ մօտն էր կանգնած, և բարկադած ասաց՝ Այ՛ն, դուք դիտմամբ զանամուրը վատ էք սարքնլ, որ ես վատ խաղամ, ալ՛ գիտեմ...

—Բայց բաւական չէր լինիլ, եթէ միայն մի երկու կտոր ածէր ու վերջացնէր:

—Նայած թէ ինչպէս. Ռաուլը ոչ միայն լաւ է ածում որպէս երեխայ, այլ շատերը գտնում են որ նորան արժէ լսել առհասարակ:

Հայրը պատմեց նաև, որ Ռաուլը այժմ արդէն 240.000 բուրլի փող ունի բանկում և որ Ամերիկա գուցէ առաջիկայ չը գնալին, եթէ պայմանը ինքը, հայրը ստորադրած չը լինէր այն ժամանակ, երբ դու ևս միայն 70.000 բուրլի ունէր Ռաուլը: Հօր ասելով, Ռաուլը սկսել է ածել երկու տարեկան լրացած, բայց միայն լսողութեամբ: Չորս տարին լրացած, նա արդէն 10 ամիս դաս էր առել, երբ նա տւեց իւր առաջին կոնցերտը, որ շատ հաւանեց վարչաւարի հասարակութիւնը: Գորանից լետ նա արդէն պտըտել է ամբողջ Ներոպան և անցեալ տարի Աշխարհահանդէսի ժամանակ, նա տւեց իւր մեծ կոնցերտը Պարիզում, Տրոկադերօի դահլիճում: Պատմեց նաև, որ նորա հետ է միշտ իւր երաժշտական դաստիարակը, վարչաւարից և որ նա Ռաուլին պիտի ուղեկցի ամեն ուրեք, երբ իսկ երբ Պարիզում Սեն-Սանսի մօտ դասեր կ'առնի:

Հետաքրքրական է մի հօր դրուժիւն, որը արդեան հանճարեղ փութրիկ որդի ունի:

—Աս իրաւագէտ եմ, ասաց նա, և փաստաբան եմ վարչաւարում. բայց այժմ ես ստիպւած եմ թողնել փաստաբանութիւնը. Այդ դրուժիւնը ինձ համար ծանր է. ես չեմ կարող առանց պարապմունքի մնալ: Եւ մտադիր եմ մի ամսագիր հրատարակել, ինքս մասնագէտ եմ սոցիալական գիտութիւններին:

Հօր կամքով փոքրիկ Ռաուլը ինձ մօտ մի լիշտուակ թողնց, Նւիրելով ինձ իւր մեծագիր լուսանկարը և իւր շարադրութիւնները, իւր անունը գրելով նոցա վերայ: Որքան վարժէ ածում, այնքան վարժ չի գրում Ռաուլը: Գրութիւնը նոր գրել սովորած երեխայի գրութիւն է, բայց ե այնպէս խզմզած չէ, այլ որոշակի գրւած:

Հետաքրքրական էր երեխայի տեսքը և արտապատկութիւնը: Գլուխը ինտելիգենտ երեխայի գլուխ է, լաւ զարգացած և դուրս ընկած գանգով ու ճակատով և լուրջ հայեացքով: Շարժւածքը շատ ազատ: Փափիկի դուրեկան երեսին համապատասխանում են մարմինը առհասարակ և նուրբան փափիկի և լաւ զարգացած ձեռքերը և բազուկները: Իւր փոքրիկ քուլը, որ չորս տարեկան է, ծնողների ասելով, նմանապէս լաւ լսողութիւն ունի:

Վերջացնեմ ասելով որ Ռաուլը ունի արդէն շատ շքանշաններ որ նա կրում է իւր երեխայական պարզ հագուստի վերայ: Նոցա մէջ մանաւանդ աչքի է ընկնում Պարսից շահի տւած աստղանշանը: